

ԱՄՓՈՓ ԱԹԵՐԹ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-343-05.11.2019-ՖՎ-011/0) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Կառավարություն	1-ին հոդված	«որին մասնակցում են» բառերն առաջարկում ենք փոխարինել «որին պարտադիր մասնակցում են» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է:
Կառավարություն	2-րդ հոդվածի 4-րդ մաս	այս փուլում առաջարկում ենք ավելացնել միայն գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին. շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «11) անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ Հաշտարարին դիմելու պահին ՀՀ տարածքում գրանցված կամ հաշվառված և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, բացառությամբ սույն օրենքով նախատեսված ֆինանսական	Չի ընդունվել Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենսդրությամբ սահմանված է գերփոքր համարվող տնտեսավարողների որոշման երկու չափանիշ՝ հասույթի կամ ակտիվների հաշվ-յին արժեք և աշխատողների քանակ, միևնույն ժամանակ ՀՀ-ում չի վարվում այդպիսի սուբյեկտների տեղ-կան միասնական բազա, հետևաբար խնդրահարույց է հաշտարարին դիմելու պահին հաճախորդի՝ գերփոքր հանդիսանալու փաստի պարզումը: Փոխարենը՝ քննարկման	Ընդունվել է:

		կազմակերպությունների»	արդյունքում առաջարկում ենք ընդլայնել հաճախորդների շրջանակը՝ ներառելով միայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին	
Կառավարություն	2-րդ հոդվածի 3-րդ մաս	<p>շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «10) իրավասու դատարան՝ ա. Հաճախորդի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե հաճախորդը ֆիզիկական անձ է.</p> <p>բ. Հաճախորդի պետական հաշվառման վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե հաճախորդը անհատ ձեռնարկատեր է.</p> <p>գ. Հաճախորդի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե հաճախորդը իրավաբանական անձ է, իսկ Հաճախորդի՝ օտարերկրյա իրավաբանական անձի՝ ՀՀ տարածքում գրանցված մասնաճյուղ լինելու դեպքում՝ մասնաճյուղի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան»</p>	Ընդունվել է	Ընդունվել է:

Կառավարություն	-	Նախորդ կետից բխող փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում	Ընդունվել է	Ընդունվել է:
Կառավարություն	6-րդ հոդվածի 1-ին մասի «դ» և «ե» կետեր	<p>շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին կետով՝</p> <p>7.1) իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդի դեպքում՝ հայտարարություն այն մասին, որ հաճախորդը հանդիսանում է սույն օրենքով նախատեսված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր՝ ներկայացնելով գերփոքր իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու վերաբերյալ համապատասխան հավաստում».</p> <p>«ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին կետով՝</p> <p>9.1) ֆիզիկական անձ հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդի դեպքում՝ իրավաբանական անձ կամ անհատ</p>	<p>Ընդունվել է մասնակի</p> <p>Լրացումները կատարվել են, իսկ 7.1 կետը լրացվել է հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«7.1) իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդի դեպքում՝ հայտարարություն հաճախորդի՝ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու պահին ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու և Հաշտարարի գրասենյակին տրված համաձայնություն իր՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու մասին տեղեկատվությունը հարկային մարմնից ստանալու վերաբերյալ, կամ հարկային մարմնի կողմից տրված տեղեկանքն իր միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ.»</p>	Ընդունվել է:

		ձեռնարկատեր հաճախորդի պետական գրանցման փաստաթղթի պատճենը կամ անհատականացնող համարը.»		
Կառավարություն	Նոր հողված (խմբագրված նախագծի 7-րդ հողված)	շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ»:	Ընդունվել է	Ընդունվել է:
Կառավարություն	Նախագծի 7-րդ հողվածի (խմբագրված նախագծի 8-րդ հողվածի) 1)-ին մաս	սահմանել հետևյալ կարգավորումը՝ «Օրենքի 11-րդ հողվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում Կազմակերպության բացատրությունները ստանալուց կամ սույն հողվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալուց հետո քսանչորս աշխատանքային օրվա ընթացքում: Առանձնապես բարդ գործի պարագայում Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է սույն մասով նախատեսված քսանչորսօրյա ժամկետը իր որոշմամբ երկարաձգել ևս տասնչորս աշխատանքային օրով:»: Միևնույն ժամանակ, պահանջի	Ընդունվել է 3-րդ մասը խմբագրվել է, լրացված 9-11 մասերը հանվել են, 12-րդ մասը դարձել է 9-րդ մաս	Ընդունվել է:

		քննության ժամկետի կասեցման վեր. կարգավորումը հանել		
Աժ ակադեմիայի Արկադի Խաչատրյան	Նախագծի 7-րդ հոդվածի (խմբագրված նախագծի 8-րդ հոդվածի) 2)-րդ մաս	Լրացված 9-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ ««Հարկային մարմնի կողմից Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին տեղեկատվությունը տրամադրվում է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ առցանց հարցումներին ավտոմատ պատասխանելու եղանակով (այդպիսի համակարգի առկայության դեպքում):»»	Լրացումը կատարված է	Ընդունվել է:
Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածի (խմբագրված նախագծի 10-րդ հոդված) 1-ին մաս	շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 14-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասում «փոստով առաքում որոշման մեկական օրինակ» բառերը փոխարինել «ոչ ուշ, քան հաջորդ օրը ծանուցում որոշման մասին՝ վերջիններիս կողմից ընտրված համապատասխան ծանուցման եղանակով ներկայացնելով որոշումը» բառերով.»	Ընդունվել է	Ընդունվել է:
Կառավարություն	Նախագծի 10-րդ հոդվածով (խմբագրված նախագծի 11-րդ հոդվածով) լրացվող 14.1-ին հոդված	վերնագրից անհրաժեշտ է հանել «կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի» բառերը, քանի որ Հաճախորդի և Կազմակերպության հաղորդակցումը տեղի է ունենում ոչ թե Ֆինանսական համակարգի հաշտարարի	Ընդունվել է	Ընդունվել է:

		գրասենյակի, այլ ֆինանսական համակարգի հաշտարարի հետ		
Կառավարություն	Նախագծի 19-րդ հոդված	հանել և բովանդակությունը ներառել Հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներում	Ընդունվել է	Ընդունվել է:
Կառավարություն	Նախագծի 20-րդ հոդվածի (խմբագրված նախագծի 21-րդ հոդվածի) 1-ին մաս	շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ա. 2-րդ կետը «կազմակերպություններ» բառից հետո լրացնել «, բացառությամբ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների» բառերով.»	Ընդունվել է	Ընդունվել է:
Կառավարություն	Նախագծի 20-րդ հոդվածի (խմբագրված նախագծի 21-րդ հոդվածի) 3-րդ մասով առաջարկվող 6-րդ մասի կարգավորում Ը	հանել Նախագծից	Ընդունվել է 7-րդ մասը դարձել է 6-րդ	Ընդունվել է:
Կառավարություն	Նախագծի 20-րդ հոդվածի (խմբագրված նախագծի 21-րդ հոդվածի) 1-ին մասի «բ»	հանել Նախագծից	Ընդունվել է 2.2 ենթակետը դարձել է 2.1 ենթակետ	Ընդունվել է:

	կետի 2. 1-ին և 2.3-րդ ենթակետեր			
Կառավարություն	Նախագծի 20-րդ հոդվածի (խմբագրված նախագծի 21-րդ հոդվածի) 1-ին մասի 4-րդ կետ	Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը «բրոքերներ» բառից հետո լրացնել «բացառությամբ այն ապահովագրական բրոքերների, որոնք ծառայություններ են մատուցում բացառապես ապահովագրական ընկերություններին» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է:
Կառավարություն	Նախագծի 20-րդ հոդվածի (խմբագրված նախագծի 21-րդ հոդվածի) 1-ին մասի 8-րդ կետ	Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել	Չի ընդունվել Քանի որ համապատասխան նախագիծ մշակված լինելու հանգամանքը դեռ չի նշանակում վերջինիս ընդունում: Իսկ նույնիսկ ընդունման դեպքում, եթե այդպիսի լիցենզիա ունեցող կազմակերպություններ արդեն իսկ կլինեն, նրանք պետք է շարունակեն վճարել մասնակցության վճարներ, իսկ եթե ոչ, ապա միևնույն է՝ չեն վճարի	Ընդունվել է:
Աժպատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագծի 22-րդ հոդվածի (խմբագրված նախագծի 23-րդ	Հաշվի առնելով սույն նախագծի ընդունման, ինչպես նաև նոր խորհրդի անդամների նշանակման հնարավոր ժամկետները՝ սահմանել, որ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված խորհրդի անդամները	Նշված մասը խմբագրվել է	Ընդունվել է:

	հողվածի) 2-րդ մաս	շարունակում են պաշտոնավարել մինչև 2021 թվականի հունվարի 01-ը՝ 2020 թվականի հուլիսի 1-ի փոխարեն:		
«Հ կառավարություն	-	Նախագիծը լրամշակվել է: Լրացվել է 2 նոր նախագծերով . «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին, «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	Ընդունվել է:	Ընդունվել է: